ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

ԿԱՊԿՈՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԸՆԹԵՐՑՈՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾՆՈՂՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ*

ՀՏԴ 37.022

Գյուլամիրյան Զուլիետա
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,
Ա. Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ,
Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Երևան, Հայաստանի Հանրապետություն
gyulamiryan@mail.ru

Մելքոնյան Գայանե
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,
Ա. Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
Երևան, Հայաստանի Հանրապետություն
gajanemelkonyan@gmail.com

Հոդվածում ներկայացվում են ԿԱՊԿՈՒ (կրթության առանձնահատուկ պայմանների *կարիք ունեցող) աշակերտների ընթերցողական կարողության ձևավորման գործընթացում առաջացած ակնհայտ դժվարությունները և այդ ուղղությամբ ծնողների դիրքորոշումներն ու կարծիքները: Ուղենշված են ներառական կրթության համատեքստում գոյություն ունեցող դժվար ու բարդ խնդիրները, որոնց լուծման համար առաջադրվել են համապատասխան օգտակար և կարևոր մեթոդական ցուցումներ՝ հիմք ընդունելով ծնողների կայուն դիրքորոշումներն ու իրատեսական կարծիքները: Վերլուծվել են այդ խնդրի շուրջ առաջացած ծնողների համոզմունքներն ու տեսակետները, ի հայտ են եկել մի շարք անհաղթահարելի դժվարություններ, որոնք խոչընդոտում և խանգարում են տվյալ աշակերտի կրթության, մասնավորապես կարդալու կարողության որակի բարելավմանն ու զարգացմանը: Նաև ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա առաջադրվել և հիմնավորվել են ընթերցողական կարողության զարգացմանը նպաստող մեթոդական այնպիսի արդյունավետ և շահեկան ցուցումներ, որոնց կիրառումը կզարգացնի և կխթանի աշակերտի միտքը՝ դրանով իսկ բարելավելով և բարձրացնելով ընթերցողական կարողության մակարդակը: Այնուամենայնիվ, այս հիմնախնդիրը միշտ էլ առկա է, գտնվում է հասարակության ուշադրության կենտրոնում: Այն պահանջում է լուրջ ուշադրություն, մանրակրկիտ, քրտնաջան աշխատանք և անհատական մոտեցում յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ: Այդ համատեքստում ընթերցողական կարողության զարգացման խնդիրները կարող են լուծվել և նշված համալիր մոտեցումների դեպ-*

*Հոդվածը ներկայացվել է 30.11.2022:
Տպագրության է երաշխավորել ՄՄՀ խմբագրական խորհրդի անդամ, ՀՊՄՀ մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, մ.գ.դ., պրոֆեսոր, Զ. Գյուլամիրյանը: 23.12.2022:
Հոդվածը տպագրության է ընդունվել 12.01.2023:

քում է միայն հնարավոր հասնել ցանկալի դրական արդյունքի:

Բանալի բառեր՝ *ԿԱՊԿՈՒ աշակերտներ, ընթերցողական կարողություն, ակնհայտ դժվարություններ, ծնողների դիրքորոշումներ, կարդալու գործընթաց, խնդիրներ, ներառական կրթություն:*

Ներածություն

Հոդվածում ներկայացվում են ներառական կրթության մեջ ընդգրկված աշակերտի ընթերցողական կարողության դժվարությունները և այդ ուղղությամբ ծնողի դիրքորոշումները: Ուղենշված են ներառական կրթության համատեքստում գոյություն ունեցող խնդիրները: Վերլուծվել են խնդրի շուրջ ծնողների դիրքորոշումները, բացահայտվել են մի շարք դժվարություններ, որոնք խոչընդոտում են տվյալ երեխայի կրթության, մասնավորապես կարդալու կարողության որակի զարգացմանը:

Հիմնախնդիրը

ԿԱՊԿՈՒ դպրոցականների ընթերցողական կարողության գործընթացում առաջացած դժվարությունների բացահայտում և այդ համատեքստում օգտակար ցուցումների առաջադրում:

Հետազոտության նպատակը

Բացահայտել ԿԱՊԿՈՒ դպրոցականի ընթերցողական կարողության զարգացման գործընթացի դժվարությունները և ներկայացնել այդ խնդիրների լուծման ուղղությամբ մեթոդական ցուցումներ՝ հիմք ընդունելով ծնողների դիրքորոշումները:

Հետազոտության նորույթը

Ուսումնասիրությունների արդյունքներով հիմնավորված է ԿԱՊԿՈՒ աշակերտի ընթերցողական կարողության զարգացմանը նպաստող մեթոդական ցուցումներ, որոնց կիրառումը կզարգացնի երեխայի միտքը՝ դրանով իսկ բարելավելով ընթերցողական կարողության մակարդակը:

Հետազոտության նկարագիրը

ԿԱՊԿՈՒ երեխաների ընթերցողական կարողության զարգացման գործընթացի դժվարությունները բացահայտելու և դրանց կանխման և շտկման ուղղություններով աշխատանք իրականացնելու նպատակով հարցախույզ իրականացրինք Երևանի և Գյումրու մի շարք դպրոցների I-IV դասարաններում սովորող ներառական կրթության մեջ ընդգրկված աշակերտների ծնողների շրջանում:

Հարցմանը մասնակցել է 66 ծնող (նկ. 1): Հետաքրքիր զուգադիպությամբ հարցախույզին մասնակցած ծնողները գրեթե հավասարապես բոլոր 4 դասարաններում սովորող երեխաներ ունեն:



Նկ. 1 Աշակերտների ծնողների բաշվածությունն ըստ դասարանների

Հարցախույզի առաջին հարցով մեզ հետաքրքրում էր, թե դասանյութերն ընթերցելիս իրենց երեխան ունի՞ արդյոք աջակցության կարիք: Հետազոտության արդյունքները բերված են նկ. 2-ում: Ինչպես և նախապես ենթադրվում էր, բերված փաստարկները հաստատում են, որ երեխաներին ծնողների աջակցությունն, այո՛ անհրաժեշտ է. առանց աջակցության հնարավոր չէ երեխային կրթության մեջ հասցնել որևէ արդյունքի: Ցավոք, մի փոքր անհասկանալի է 3-րդ դասարանի աշակերտների ծնողների կարծիքը նշված խնդրի վերաբերյալ: Հարցմանը մասնակից ծնողների 29,5 %-ն ընտրել է «Այո» պատասխան - տարբերակը, իսկ 52,9 %-ը՝ «Մասամբ»: Մինչդեռ, մեր կարծիքով, պետք է լիներ հակառակը:

Ինչպես նշում են բազմաթիվ մանկավարժներ, ուսումնական գործընթացում առկա դժվարությունները հնարավոր չէ ամբողջովին վերացնել. այն երեխային ուղեկցում է ամբողջ կյանքի ընթացքում: Սակայն համապատասխան միջամտության դեպքում աշակերտը հաճախ կարող է հաջողություններ ունենալ և առաջընթաց գրանցել[1]:

[1] ետրոսյան Ս. Ներառական կրթությունը գործնականում. Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2021, էջ 10:



Նկ. 2 Դասանյութերն ընթերցելիս Ձեր երեխան ունի՞ արդյոք աջակցության կարիք

Հարցախույզի երկրորդ հարցով փորձեցինք պարզել, թե կարդալու գործընթացում ԿԱՊԿՈՒ երեխան ինչ խնդիրներ է ունենում: Հետազոտության արդյունքները ներկայացված են նկ. 3-ում: Ինչպես երևում է, 1-4-րդ դասարանների աշակերտների մեջ նկատվում են հիշողության հետ կապված խնդիրներ, այդ են վկայում «Որոշ տառեր չեն հիշում» պատասխանները (1-ին դասարանում՝ 20,4%, 2-րդ-ում՝ 17,1 %, 3-րդ-ում՝ 17,4 %, 4-րդ-ում՝ 14,3 %): 2-4-րդ դասարաններում նկատելի են կարդալու գործընթացում տառեր և վանկեր բաց թողնելու (2-րդ դասարանում՝ 19,5%, 3-րդ-ում՝ 15,2 %, 4-րդ-ում՝ 16,6 %) խնդիրը: Նաև տեսանելի է այն, որ 1-4-րդ դասարաններում «Կարդում է տառերով» հարցին ծնողները նշել են շատ պատասխան տարբերակներ (1-ին դասարանում՝ 16,3 %, 2-րդ-ում՝ 14,6 %, 3-րդ-ում՝ 21,8 %, 4-րդ-ում՝ 19,0 %), ինչը տրամաբանական է: Տրամագրում պարզ երևում է, որ «Կարդացածը չի հասկանում» (1-ին դասարանում՝ 18,4 %, 2-րդ-ում՝ 17,1 %, 3-րդ-ում՝ 13,0 %, 4-րդ-ում՝ 16,7 %) դժվարությունը ներառական կրթության մեջ ընդգրկված երեխաների դեպքում ակնառու է և այժմեական: Այս առումով մենք կարծում ենք, որ ծնողները և ուսուցիչները պետք է համագործակցեն խնդիրը թեթևացնելու համար: «Այլ պատասխան» տողում 1-ին և 2-րդ դասարանների ծնողները նշել են գրեթե միևնույն բնույթի կարծիքներ. «Կարդալու գործընթացում խնդիրներ ունի» և «Չի կարողանում կարդալ»:

Հայտնի է, որ խոսքը բարձրագույն հոգեկան գործընթացներից մեկն է: Այն կառուցվում է լեզվական համակարգի միջոցով և մայրենի լեզվի հետ միասնության մեջ է: Խոսքի ընդունված տեսակներին գիտակցական տիրապետելը ոչ միայն մարդու զարգացման և կենսագործունեության գործընթացում ունի կարևոր նշանակություն, այլև այն համարվում է սոցիալական ամենակարևոր խնդիրներից մեկը: Խոսքի զարգացման շարժիչ

ուժը համարվում է հաղորդակցման պահանջմունքն ու անհրաժեշտությունը[1]:



Նկ. 3 ԿԱՊԿՈՒ աշակերտների կարդալու գործընթացում առաջացած հիմնական դժվարությունները

Ծնողներին հասցեագրված հարցաթերթիկի երրորդ հարցով մենք պարզեցինք, թե *իրենց երեխաները կարողանում են արդյոք որոշակի ժամանակահատվածում կարդալ և ամբողջությամբ հասկանալ ուսուցչի տված տեքստը, հիշել բարդ, ծավալուն մտքերը:*

Ինչպես երևում է նկ. 4-ից, «Այո» պատասխան - տարբերակն են ընտրել. 1-ին դասարանի աշակերտների ծնողների 7,1 %-ը, 2-ի՝ 10,5 %-ը, 3-րդ-ի՝ 5,9 %-ը, իսկ 4-րդ-ի 6,2 %-ը: Այսինքն, փաստորեն շատ քիչ աշակերտներ են կարողանում կարդալ և ամբողջությամբ հասկանալ բարդ նախադասությունները, ծավալուն մտքերը: «Ոչ» պատասխան - տարբերակն ընտրել են հարցմանը մասնակից ծնողների մեծ մասը (1-ին դասարանի աշակերտների ծնողների 78,6 %-ը, 2-ում՝ 57,9 %-ը, 3-րդ-ում՝ 70,6 %-ը, իսկ 4-րդ-ում 37,5 %-ը), որոնք իրոք չեն կարողանում որոշակի ժամանակահատվածում կարդալ և ամբողջությամբ հասկանալ ուսուցչի տված բարդ նախադասություններն ու ծավալուն մտքերը: Հարկ է նշել, որ ծնողներից մի քանիսը «մասամբ» պատասխան - տարբերակն է ընտրել՝ դրանով իսկ խոսափելով իրավիճակի ռեալ գնահատումից: Այսպիսի մոտեցումն ավելի ակնառու երևում է հատկապես 4-րդ դասարանի աշակերտներ ունեցող ծնողների պատասխաններում: Նրանց 56,3 %-ը տվել է այս-

[1]Սվաջյան Ա.Հ., Ադամյան Հ.Ա., Գարեգինյան Ա.Ա. և ուրիշներ. Ինչպես խթանել ներառումը դասարանում, Մեթոդական ուղեցույց. Ձեռնարկ. - Երևան: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն.- 2021, էջ 29:

պես կոչված խուսափողական պատասխան: Մեզ համար հետաքրքիր էր նաև հարցի շուրջ այլ ծնողների ունեցած այլ կարծիքները, սակայն, ցավոք, «Այլ պատասխան» տարբերակում ծնողները գրառումներ չէին կատարել: Ի մի բերելով այս հարցին ծնողների տված պատասխանները՝ հանգեցինք այն եզրակացության, որ ԿԱՊԿՈՒ երեխաներից շատերն ունեն ընթերցողական կարողության և կարդալու կարողության լուրջ դժվարություններ, որոնք կարելի է հաղթահարել միայն որոշակի մեթոդների միջոցով՝ հատկապես կիրառելով խաղային տեխնոլոգիաներ:



Նկ. 4 Երեխայի կարդալու գործընթացի կազմակերպումն ըստ տրված ժամանակահատվածի

Հետազոտության հաջորդ հարցով մենք ծնողներից փորձեցինք պարզել, թե կարողանում են արդյոք իրենց երեխաները կարդալու ընթացքում պահպանել կարդալու որակական հատկանիշներից առնվազն երկուսը (հասկանալ և սահուն ընթերցել):

Ինչպես երևում է նկ. 5-ում, «այո» պատասխան - տարբերակն ընտրել են հարցմանը մասնակից ծնողների փոքրամասնությունը (1-ին դասարանի աշակերտների ծնողների 7,1 %-ը, 2-ում՝ 10,5 %-ը, 3-րդ-ում՝ 5,9 %-ը, իսկ 4-րդ-ում 6,3 %-ը): Սա, մեր կարծիքով շատ վատ ցուցանիշ է:



Նկ. 5 Երեխայի կարդալու որակական հատկանիշների պահպանման կարողունակությունը

Վարժ կամ սահուն կարդալ ասելով՝ հասկանում ենք առաջադրված նյութի՝ ամբողջական բառերով, առանց անհարկի դադարների, անհրաժեշտ չափով արագ ու սահուն ընթերցումը: Ընդ որում՝ կարդալու արագությունը պետք է համապատասխանի սովորական խոսակցության արագությանը՝ նպաստելով ընթերցած նյութի բովանդակության, գաղափարի ըմբռնմանը, ենթատեքստի կռահմանը (ինչպես կարդացողի, այնպես էլ ունկնդիրների կողմից): Տառերով կամ վանկերով, անհարկի դադարներով, խիստ դանդաղ կամ արագ կարդալը խոչընդոտում է բնագրի բովանդակության գիտակցական յուրացմանը: Հենց այդ պատճառով էլ սահուն կամ վարժ կարդալը կարդալու որակական հիմնական հատկանիշներից է[1]:

Հարցաթերթիկի 5-րդ հարցին (նկ. 5) «Ոչ» պատասխան են տվել հարցմանը մասնակից ծնողների գերակշիռ մասը՝ նշելով, որ իրենց երեխաներն ընդհանրապես չեն կարողանում կարդալ (1-ին դասարանի աշակերտների ծնողների 35,7 %-ը, 2-ում՝ 47,4 %-ը, 3-րդ-ում՝ 29,4 %-ը, իսկ 4-րդ-ում 43,7 %-ը): Հարցին «Մասամբ» պատասխան - տարբերակը ծնողները, ինչպես նախորդ հարցի մեջ, այստեղ ևս զգալի շատ են նշած, հատկապես 3-րդ դասարանում՝ 64,7 %:

Հարցաթերթիկի հաջորդ հարցով պարզեցինք ծնողների կարծիքն այն մասին, թե որքանով են իրենց երեխաներն ընթերցում (նկ. 6):

Դիտարկելով հարցաթերթիկի այս հարցին ծնողների տված պատասխանները՝ համոզվեցինք, որ 1-4-րդ դասարանների սովորողների մեջ կարդալու նկատմամբ հետաքրքրություն գրեթե չկա: Այսպես են մտածում 1-ին դասարանի աշակերտների ծնողների 14,3 %-ը, 2-րդ-ում՝ 10,5 %-ը, 3-րդ-ում՝ 5,9 %-ը, իսկ 4-րդ-ում 18,7 %-ը: Սա ներառական կրթության համատեքստում դիտարկվող հարցերի մեջ ամենացավոտն է, լուրջ և արդյունավետ աշխատանք է պահանջում ոչ միայն դասավանդող ուսուցիչների, այլև բազմամասնագիտական թիմի (լոգոպեդ, հատուկ մանկավարժ, հոգեբան),

[1]Գյուլամիրյան Զ. Հ, Մայրենիի ուսուցման մեթոդիկա: Ուսումնական ձեռնարկ, Երևան, «Զանգակ», 2018, էջ 114:

ինչպես նաև ընտանիքի անդամների շրջանում:



Նկ. 6 Ծնողների կարծիքն իրենց երեխաների ընթերցասիրության մասին

Անառարկելի է, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքում ընտանիքի գործոնը առանձնահատուկ դերակատարություն ունի: Հայտնի է, որ ներառական կրթությունը զարգացնելու համար էական նշանակություն ունի ընտանիքի ներգրավումն երեխայի կրթական գործընթացում: Մասնագետները քննության են առնում ընտանիքների հետ աշխատանքի ձևերը և մշակում նոր գործելաոճ[1]:

Նշենք, որ ծնող-երեխա փոխհարաբերությունների խնդիրը միշտ էլ եղել է հոգեբանների հետաքրքրությունների շրջանակում: Սակայն զարգացման տարբեր խանգարումներ և հոգեբանական խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատելիս առավելապես առանց ծնողների ներգրավվածության և փոխհամագործակցության հնարավոր չէ հասնել ցանկալի արդյունքների: Ուստի ծնողավարության հմտությունների տիրապետումն առաջնային է յուրաքանչյուր մասնագետի համար, ով գործունեության բերումով շփվում է երեխաների և նրանց ծնողների հետ[2]:

Հարցաթերթիկի վերջին՝ 6-րդ հարցով մենք ծնողներին առաջարկել էինք ներկայացնել կարծիք-առաջարկություն ԿԱՊԿՈՒ երեխաների ուսումնական կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացման վերաբերյալ: Ներկայացնենք ծնողների առաջարկներն ըստ դասարանների.

<u>1-ին դասարանի ծնողներն առաջարկում են՝</u>

- համագործակցություն հատուկ մանկավարժի և լոգոպեդի հետ,

- անհատական աշխատանք յուրաքանչյուր երեխայի հետ,

- մշակել ԿԱՊԿՈՒ երեխաների հետ իրականացվող ուսումնական գործունեության հատուկ մեթոդներ,

---

[1]Հարությունյան Մ., Պողոսյան Ա., Ավագյան Ա. և ուրիշներ. Ներառական կրթության ռազմավարություն, Դասագիրք, Երկրորդ հրատարակություն, Երևան: Ասողիկ, 2020, էջ 67:

[2]Անտոնյան Ս., Մովսիսյան Ն., Թովմասյան Լ, Ծնողավարության ձեռնարկ հատուկ կարիքներ ունեցող երեխաների ծնողների հետ աշխատանքների համար: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Զեկույց 2019թ., Երևան, էջ 4:

- ապահովել ԿԱՊԿՈՒ երեխաների ակտիվ մասնակցությունը դասագործընթացում:

2-րդ դասարանի ծնողներն առաջարկում են.

- Ճիշտ կազմակերպել ԿԱՊԿՈՒ երեխաների օրվա ռեժիմը,

- կրթադաստիարակչական գործընթացում կիրառել տարամակարդակ աշխատանք,

- կրթադաստիարակչական գործընթացում կիրառել Ճկուն մեթոդական համակարգ,

- ապահովել մասնագետների և ծնողի համագործակցությունը,

- ստեղծել հարմարավետ միջավայր,

- մշակել գրավոր աշխատանքների անհատական հանձնարարականներ,

- ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատող մասնագետներին աջակցել,

- ապահովել ԿԱՊԿՈՒ երեխաների հետ սոցմանկավարժի, հոգեբանի, ինչպես նաև հատուկ մանկավարժի մշտական աշխատանքը,

- ստեղծել հետաքրքիր և բարենպաստ կրթական միջավայր,

- կրթադաստիարակչական գործընթացում կիրառել խաղային տեխնոլոգիաներ:

3-րդ դասարանի ծնողներն առաջարկում են.

- մշակել ընթերցանության նկատմամբ ձգտում,

- ապահովել հատուկ մանկավարժի աջակցությունը,

- կարևորել լոգոպեդի հետ աջակցությունը,

- կարևորել ուսուցչի և ուսուցչի օգնականի համագործակցությունը,

- դասասենյակը կահավորել ԿԱՊԿՈՒ երեխաների համար,

- ուսումնական գործընթացում կիրառել համագործակցային մեթոդներ:

4-րդ դասարանի ծնողներն առաջարկում են.

- թիմային աշխատանքի միջոցով ԿԱՊԿՈՒ երեխաներին ներգրավել ուսումնական գործընթացի մեջ,

- ապահովել ծնող - ուսուցիչ - մանկավարժահոգեբանական թիմային համագործակցությունը,

- առաջնային համարել ԿԱՊԿՈՒ երեխաների հետ անհատական աշխատանքը:

Եզրակացություն

Այսպիսով, վերլուծելով մեր պրակտիկ մանկավարժական փորձի և ծնողների շրջանում անցկացրած հարցախույզի արդյունքները՝ հանգեցինք այն եզրակացության, որ ըստ ծնողների կարծիքների 1-4 -րդ դասարաններում կրթության մեջ ընդգրկված ԿԱՊԿՈՒ երեխաները հիմնականում դժվարանում են կարդալու և գրելու կարողությունների ձեռքբերման գործընթացում, և այս հիմնախնդիրը շարունակում է մնալ այժմեական ու խոցելի: Դեռևս մշակված չեն ԿԱՊԿՈՒ երեխաներին տարեկիցների հետ համագործակցության մղող, թիմային աշխատանքի մեջ նրանց ընդգրկվածությունն ապահովող մեթոդական արդյունավետ հնարներ: Նշված խնդիրների լուծման համար լուրջ համակարգային աշխատանք է պահանջում կարդալու նկատմամբ հետաքրքրությունը, սկսած դպրոցից, ընտանիքից, հեռուստատեսության հաղորդումներից և զարգացման հատուկ կենտրոններից: Միայն այսպիսի մոտեցման դեպքում կլուծվեն ԿԱՊԿՈՒ աշակերտների ընթերցողական կարողության զարգացման խնդիրները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Պետրոսյան Ս. Ներառական կրթությունը գործնականում. Ուսումնամեթոդական ձեռնարկ. - Երևան: .- 2021.
2. Սվաջյան Ա.Հ., Ադամյան Հ.Ա., Գարեգինյան Ա.Ա. և ուրիշներ. Ինչպես խթանել ներառումը դասարանում, Մեթոդական ուղեցույց. Ձեռնարկ. - Երևան: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն.- 2021.
3. Գյուլամիրյան Ջ. Հ, Մայրենիի ուսուցման մեթոդիկա: Ուսումնական ձեռնարկ, Երևան, «Զանգակ», 2018,
4. Հարությունյան Մ., Պողոսյան Ա., Ավագյան Ա. և ուրիշներ. Ներառական կրթության ռազմավարություն, Դասագիրք.- Երկրորդ հրատարակություն. - Երևան: Ասողիկ, 2020.-
5. Անտոնյան Ս., Մովսիսյան Ն., Թովմասյան Լ, Ծնողավարության ձեռնարկ հատուկ կարիքներ ունեցող երեխաների ծնողների հետ աշխատանքների համար: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Զեկույց 2019թ., Երևան:

REFERENCES

1. Antonyan S., Movsisyan N., T'ovmasyan L, C'noghavarowt'yan d'er'nark hatowk kariqner ownecogh erexaneri c'noghneri het ashxatanqneri hamar: Hanrapetakan mankavarjhahogebanakan kentron, Zekowyc 2019t'., Er.- 98 e'j: [Antonyan S., Movsisyan N., Tovmasyan L, Parenting manual for working with parents of children with special needs. Republican Pedagogical and Psychological Center, Report 2019, Yer. - 98 pages.] (in Armenian).
2. Gyowlamiryan J. H, Mayrenii owsowcman met'odika: Owsowmnakan d'er'nark, Er., «Zangak», 2018, 344 e'j: [Gyulamiryan J. H, Mother tongue teaching methodology. Study manual, Yer., "Zangak", 2018, 344 pages.] (in Armenian).
3. Harowt'yownyan M., Poghosyan A., Avagyan A. & owrishner. Nerar'akan krt'owt'yan r'azmavarowt'yown, Dasagirq.- Erkrord hratarakowt'yown. - Er&an: Asoghik, 2020.-312 e'j: [Harutyunyan M., Poghosyan A., Avagyan A. and others. Inclusive Education Strategy, Textbook: Second Edition. - Yerevan: Asoghik, 2020.-312 pages.] (in Armenian).
4. Petrosyan S. Nerar'akan krt'owt'yowny' gorc'nakanowm. Owsowmnamet'odakan d'er'nark. - Er&an: .- 2021.-76 e'j: [Petrosyan S. Inclusive education in practice. Educational manual. - Yerevan: .- 2021.-76 pages.] (in Armenian).
5. Svajyan A.H., Adamyan H.A., Gareginyan A.A. & owrishner. Inchpes xt'anel nerar'owmy' dasaranowm, Met'odakan owghecowyc. D'er'nark. - Er&an: Hanrapetakan mankavarjhahogebanakan kentron.- 2021.-236 e'j: [Svajyan A.H., Adamyan H.A., Gareginyan A.A. and others. How to promote inclusion in the classroom, Methodological guide. Handbook: - Yerevan: Republican Pedagogical Psychological Center.- 2021.-236 pages.] (in Armenian).

РЕЗЮМЕ

ТРУДНОСТИ ЧТЕНИЯ ШКОЛЬНИКОВ ООП И ПОЗИЦИИ РОДИТЕЛЕЙ

Гюламирян Джулиета

Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна,
Заведующий кафедрой родного языка и методики его преподавания им.А.Тер-Григоряна, доктор педагогических наук, профессор
Ереван, Республика Армения

Мелконян Гаяне

Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна,
Соискатель кафедры родного языка и методики его преподавания им.А.Тер-Григоряна,
Ереван, Республика Армения

В статье представлены очевидные трудности в процессе формирования читательской способности школьников ООП (с особыми образовательными потребностями) и позиции и мнения родителей по этому поводу. Указаны сложные и сложные проблемы, существующие в условиях инклюзивного образования, для решения которых выдвигаются соответствующие полезные и важные методические указания, взяв за основу устойчивые позиции и реалистические взгляды родителей. Проанализированы убеждения и взгляды родителей на данную проблему, выявлен ряд непреодолимых трудностей, препятствующих и препятствующих совершенствованию и развитию качества образования школьников, в частности, умения читать. Также по результатам проведенных исследований были предложены и обоснованы такие эффективные и полезные методические указания по развитию способности к чтению, применение которых будет развивать и стимулировать мышление школьника, тем самым улучшая и повышая уровень чтения. способность. Однако эта проблема всегда присутствует, она находится в центре общественного внимания. Она требует серьезного внимания, тщательной, кропотливой работы и индивидуального подхода к каждому школьнику. В связи с этим решить проблемы развития способности к чтению и добиться желаемого положительного результата можно только с помощью указанных комплексных подходов.

Ключевые слова: Школьники с ООП, способность к чтению, очевидные трудности, позиции родителей, процесс чтения, проблемы, инклюзивное образование.

SUMMARY

DIFFICULTIES OF READING SCHOOLCHILDREN OF SEN AND POSITION OF PARENTS

Gyulamiryan Julieta

Armenian State Pedagogical University named after Khachatur Abovyan,
Head of the Chair of Armenian Language and its Teaching Methods after Ashot Ter-Grigoryan,
Doctor of Pedagogical Sciences, Professor
Yerevan, Armenia

Melkonyan Gayane

Armenian State Pedagogical University named after Khachatur Abovyan,
PhD Student of the Chair of Armenian Language and its Teaching Methods after Ashot Ter-Grigoryan
Yerevan, Armenia

The article presents the obvious difficulties in the process of forming the reading ability of schoolchildren of the SEN (with special educational needs) and the positions and opinions of parents on this matter. The complex and complex problems that exist in the context of inclusive education are indicated, for the solution of which appropriate useful and important methodological guidelines are put forward, based on the stable positions and realistic views of parents. The beliefs and views of parents on this problem are analyzed, a number of insurmountable difficulties are identified that impede and hinder the improvement and development of the quality of education of schoolchildren, in particular, the ability to read. Also, based on the results of the research, such effective and useful guidelines for the development of reading ability were proposed and justified, the use of which will develop and stimulate the thinking of the schoolchildren, thereby improving and raising the level of reading. ability. However, this problem is always present, it is in the center of public attention. It requires serious attention, careful, painstaking work and an individual approach to each schoolchildren. In this regard, it is possible to solve the problems of developing the ability to read and achieve the desired positive result only with the help of these integrated approaches.

Keywords: Schoolchildren of SEN, reading ability, obvious difficulties, parents' positions, reading process, problems, Inclusive education.